# ԱԿՆԱՅ ՄԱՅԵՐԳՆԵՐ

**ՍԳԱՒՈՐ ԿՆՈՋ ՄԸ ՈՒՂՂՈՒԱԾ**

Ա՛յ իմ խեղճաբեր խաթուն, ի՞նչ կուլաս խեղճուկ ողորմուկ,
Թէ կուլաս ու վարդ կ՛ուզես, նոր ՚տի գայ գարունն ու բերէ,
Թէ կուլաս ու եարդ կ՚ուզես, գացեր որ ա՛լ չիպիտի գայ:

**ՈՂԲ ՄԵՌԱԾ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՎՐԱՅ**

Աշնան խէզէլի նըման, մէկ տըպա եկիք դուք ի վար,
Գարնան ծաղկունաց նըման, ուր որ էք, ելիք երըւան:

**ՈՂԲ ԱՌԱՔԻՆԻ ՄԱՐԴՈՒ ՄԸ ՄԱՀՈՒԱՆ ՎՐԱՅ**

Աստուածամօրը ծոցուն (2), մարգըրիտ մ՚ինկեր՝ գին չունի,
Երնէ՜կ անոր գտնողին, վա՜յ եկեր կորսընցընողին:

**ՍԳԱՒՈՐԸ ԻՐ ԿՈՐՍՆՈՒՑԱԾ ՍԻՐԵԼԻԻՆ**

Գիտես թէ մոռցե՞ր եմ քեզ. չեմ մոռցեր, դուն մոռնալուի չես,
Մըտեր էիր մէջ սրտիս, աչերուս ա՛լ ելլելու չես:

**ՄԱՅՐԸ Ի ԼՐ ՄԷԿ ՀԱՏԻԿ ԶԱՒԱԿԻՆ ՄԱՀՈՒԱՆ ՎՐԱՅ**

Գացէք փատ ու փուշ բերէք, անորդի մարիկն երեցէք,
Երեցէք մախիր արէք ու տըւք հովուն որ տանի:

**ԾԵՐՈՒՆԻ ՄԱՅՐ ՄԸ Կ՚ԵՐԳԷ**

Գիտնամ որ մարդուէ եկեր, լամ, բերեմ ալէմս ի վըրայ.
Ան որ Աստուծու եկեր, ինչեխ լանք՝ շեմը չիմանայ:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԵՌԵԼԸ ԻՐ ՍԻՐԵԼԻԻՆ**

Դիժար հիւընդակ եմ ես, ա՛ռ կամակ, եկո՛ւ զիս ի տես.
Կամակդ ի գլխուս վերեւ, ձեռքըդ տար սրտիս խոցը տես: